ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2021թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4,591.62 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.26%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 25.82%-ով և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 36.14%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4,329.2 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.33%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 27.36%-ով և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 39.3%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 262.42 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 9.18%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 4.9%-ով, իսկ 2019թ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով 0.96%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8,652.01 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.58%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 18.73%-ով և 2019թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 24.79%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8,157.53 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.64%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 20.19%-ով և 2019թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 27.69%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 494.48 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 7.51%-ով, իսկ 2020թ.և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 1.01%-ով և 9.22%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 3,301.46 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 12.95%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 26.31%-ով և 2019թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 37.09%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1027.74 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.68%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 30.85%-ով և 2019թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 46.92%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 262.42 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 9.18%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 4.9%-ով, իսկ 2019թ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով 0.96%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,220.95 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.22%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 19.2%-ով և 2019թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 25.66%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,936.58 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.11%-ով, 2020թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 23.48%-ով և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 34.67%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 494.48 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 7.51%-ով, իսկ 2020թ.և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 1.01%-ով և 9.22%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2021թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4,552.21 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.42%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար 7.17%-ով և 10.88%-ով:

2021թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.65%, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.73 տոկոսային կետով, 2.2 տոկոսային կետով ավել է 2020թ. մարտի 31-ի ցուցանիշից և 0.51 տոկոսային կետով ավել է 2019թ. մարտի 31-ի ցուցանիշից,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.94%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.71 տոկոսային կետով, 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 2.15 տոկոսային կետով, իսկ 2019թ.մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 0.4 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.41%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ.մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.03, 0.05 և 0.11 տոկոսային կետով:

2021թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 37.29 մլրդ. դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.51 մլրդ դրամով, իսկ 2019թ.մարտի 31-ի համեմատությամբ ավել է 2.08 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 14.47 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 0.57 և 4.16 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 22.82 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 1.07 և 2.08 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2020թ. հունվար-մարտին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 376.23 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 351.57 և 356.33 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 18.5 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 22.35 և 10.42 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 357.7 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 373.92 և 366.75 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. հունվար-մարտին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 15.37 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 21.15%-ով և 15.98%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 55.39 մլն դոլարի մայր գումար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3.96%-ով և 41.12%-ով,

3) ստացվել են 15.76 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 17.2%-ով և 23.95%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 70.76 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.76%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 22.97%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2021թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 980.26 մլրդ դրամ, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ. մարտի 31-ի և 2019թ.մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 21.42, 262.03 և 364.33 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3865 օր, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 80 օրով, իսկ 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 259 և 688 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2021թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4.24%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 0.04, 0.56 և 0.82 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2021թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.04%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.181 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.4 և 0.16 տոկոսային կետերով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 6.92%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.03 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.26 և 1.19 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.05%, ինչը 2020 թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.15 տոկոսային կետով, 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ փոքր է 0.15 տոկոսային կետով, իսկ 2019թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է 1.03 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2021թ. մարտի 31-ի դրությամբ կազմել 8.7 տարի: Այս ցուցանիշը 2020թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից պակաս է 0.22 տարով, իսկ 2019թ. ցուցանիշից ավել է 0.22 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2021թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 9.24%, որը 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 4.39 և 2.77 տոկոսային կետերով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2021թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 81.99%, լողացող տոկոսադրույքով՝ 18.01%: Ընդ որում, 2021թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.68 և 2.92 տոկոսային կետերով.

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2021թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 76.26%, ներքին պարտք՝ 23.74%: Ընդ որում, 2021թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2020թ. մարտի 31-ի և 2019թ. մարտի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 0.63 և 1.23 տոկոսային կետերով: